

Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Երևանի պետական համալսարանի
Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2024 թ. մայիսի 17-ին կայացած թիվ 14 նիստի

Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 2024 թ. մայիսի 17-ին կայացած թիվ 14 նիստը նախագահում էր ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկան կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը: Գիտական խորհրդի 32 անդամներից գիտական խորհրդի նիստին մասնակցել են 27-ը: Նախագահողը քվեարկության դրեց օրակարգը և այն միաձայն հաստատվեց:

Օրակարգում.

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կենսաբանության ֆակուլտետի «Կենսաբանություն» ԳՀ ինստիտուտի գիտական կազմի թափուր պաշտոնների համալրման մրցույթ:
2. ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված «Գիտական արդյունավետության խթանման դրամաշնորհային ծրագիր - 2025» մրցույթին մասնակցելու համար ներկայացված հայտերի երաշխավորության հարցը:
3. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կենսաբանության ֆակուլտետի «Կենսաբանություն» ԳՀ ինստիտուտի գիտական կազմի թափուր պաշտոնները համալրելու նպատակով մրցութային ընտրության անցկացման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան, կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը, ֆակուլտետի գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովի նախագահ, կ.գ.թ. Լ.Ս. Գաբրիելյանը: Կ.Ա. Ղազարյանը նշեց, որ «Կենսաբանություն» ԳՀ ինստիտուտի գիտական կազմի թափուր պաշտոնների համալրման մրցույթին ներկայացվել է 16 անձնական գործ: Տեղեկություններ հավակնորդների մասնագիտական բնութագրերի և գիտական որակավորումների մասին ներկայացրեց Լ.Ս. Գաբրիելյանը և նշեց, որ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի մրցութային մշտական հանձնաժողովը ուսումնասիրել է ԵՊՀ կենսաբանության գիտահետազոտական ինստիտուտի գիտական կազմի թափուր պաշտոնների համալրման նպատակով ներկայացված անձնական գործերը:

Մրցույթին ներկայացվել է 16 անձնական գործ՝

«Կենսաբանություն» ԳՀԻ-ի տնօրենի թափուր պաշտոնի հավակնորդ

Կ.գ.դ., պրոֆեսոր
Կարեն Արմենի Թոշունյան
(հիմնական, 1 դրույք)

Պրոֆ. Թոշունյանը ունի հրատարակված 100-ից ավել գիտական հոդվածներ և գիտաժողովի նյութեր: Վերջին 5 տարիների ընթացքում տպագրել է 40 գիտական հոդված ՄԳՇ-ում, որոնցում հանդես է եկել որպես առաջին, վերջին և գրազրությունը պահպանող հեղինակ: Միջազգային վարկանիշային տվյալներն են. *Scopus*-ի՝ h-index 24; ըստ *Google Scholar*-ի՝ h-index 27: Ունի 13 տարվա աշխատանքային ստաժ:

«Կենսաբանություն» ԳՀԻ-ի լաբորատորիայի ղեկավարի թափուր պաշտոնի հավակնորդներ

Կ.գ.թ. Նիկոլայ Վլադիմիրի
Ավթանդիլյան
(հիմնական, 1 դրույք)

Ունի հրատարակված 33 գիտական հոդված, և 24 գիտաժողովի նյութ: Վերջին 5 տարիների ընթացքում տպագրել է 9 գիտական հոդված ՄԳՇ-ում, որոնցից 5-ում հանդես է եկել որպես առաջին և գրազրությունը պահպանող հեղինակ: Միջազգային վարկանիշային տվյալներն են. ըստ *Scopus*-ի՝ h-index 6; ըստ *Google Scholar*-ի՝ h-index 7: Ունի 11 տարվա աշխատանքային ստաժ:

Կ.գ.դ., պրոֆեսոր Սուսաննա
Միշայի Բադայան
(հիմնական, 1 դրույք)

Պրոֆ. Բադայանը հեղինակ է 287 գիտական հրապարակումների, այդ թվում 16 գրքի/գրքի գլխի, 87 գիտական և 65 գիտաժողովի հոդվածների, ու 116 թեզիսի: Վերջին 5 տարում տպագրել է 26 գիտական հոդված ՄԳՇ-ում, որոնցից 23-ում հանդես է եկել որպես առաջին, վերջին և գրազրությունը պահպանող հեղինակ: Միջազգային վարկանիշային տվյալներն են. ըստ *Scopus*-ի՝ h-index 10; ըստ *Google Scholar*-ի. h-index 21: Ունի 40 տարվա աշխատանքային ստաժ:

Կ.գ.դ., պրոֆեսոր
Մարինե Մեմյոնի
Առաքելյան
(ներքին համատեղությամբ,
0.5 դրույք)

Պրոֆ. Առաքելյանը ունի հրատարակված 70-ից ավել գիտական հոդվածներ: Վերջին 5 տարիների ընթացքում տպագրել է 43 գիտական հոդված ՄԳՇ-ում, որոնցից 11-ում հանդես է եկել որպես առաջին, վերջին և գրազրությունը պահպանող հեղինակ: Միջազգային վարկանիշային տվյալներն են. ըստ *Scopus*-ի՝ h-index 16; ըստ *Google Scholar*-ի՝ h-index 21: Ունի 28 տարվա աշխատանքային ստաժ:

կ.գ.թ., դոցենտ
Աննա Ֆելիքսի
Կարապետյան
(ներքին համատեղություն,
0.5 դրույք)

կ.գ.դ., պրոֆեսոր
Ռուբեն Միքայելի
Հարությունյան
(ներքին համատեղությամբ,
0.25 դրույք)

«Կենսաբանություն» ԳՀԻ-ի խմբի ղեկավարի թափուր պաշտոնի հավակնորդ

կ.գ.թ., դոցենտ Աստղիկ
Սամվելի Ղազարյան
(ներքին համատեղությամբ,
0.5 դրույք)

«Կենսաբանություն» ԳՀԻ-ի ավագ գիտաշխատողի թափուր պաշտոնի հավակնորդներ

կ.գ.թ. Նաիրա Ժոռայի
Սահակյան
(հիմնական, 1 դրույք)

կ.գ.թ. Քրիստինե Սերյոժայի
Մարգարյան
(դրսի համատեղությամբ, 0.5
դրույք)

Ունի հրատարակված 14 գիտական հոդված և մի շարք
գիտաժողովի նյութեր: Վերջին 5 տարիների ընթացքում
տպագրել է 7 գիտական հոդված ՄԳՇ-ում, որոնցից 4-ում
հանդես է եկել որպես առաջին, վերջին և գրագրությունը
պահպանող հեղինակ: Ղեկավարել է տարբեր
դրամաշնորհներ: Միջազգային վարկանիշային տվյալներն
են. ըստ *Scopus*-ի՝ h-index 3; ըստ *Google Scholar*-ի՝ h-index 3:
Ունի 23 տարվա աշխատանքային ստաժ:

Պրոֆ. Հարությունյանը ունի հրատարակված բազմաթիվ
գիտական աշխատանքներ: Վերջին 5 տարիների ընթացքում
տպագրել է 21 գիտական հոդված ՄԳՇ-ում, որոնցից 7-ում
հանդես է եկել որպես գրագրությունը պահպանող հեղինակ:
Պրոֆ. Ռ. Հարությունյանի միջազգային վարկանիշային
տվյալներն են. ըստ *Scopus*-ի՝ h-index 16: Ունի 52 տարվա
աշխատանքային ստաժ:

Ունի հրատարակված 31 գիտական հոդված և 21
գիտաժողովի նյութ: Վերջին 5 տարիների ընթացքում
տպագրել է 5 գիտական հոդված ՄԳՇ-ում: Միջազգային
վարկանիշային տվյալներն են. ըստ *Scopus*-ի՝ h-index 4; ըստ
Google Scholar-ի՝ h-index 3: Ունի 19 տարվա աշխատանքային
ստաժ:

Ունի հրատարակված 55 գիտական հոդվածներ և բազմաթիվ
գիտաժողովի նյութեր: Վերջին 5 տարիների ընթացքում
տպագրել է 21 գիտական հոդված ՄԳՇ-ում, որոնցից 15-ում
հանդես է եկել որպես առաջին, վերջին և գրագրությունը
պահպանող հեղինակ: Միջազգային վարկանիշային
տվյալներն են. ըստ *Scopus*-ի՝ h-index 11; ըստ *Google Scholar*-
ի՝ h-index 13: Ունի 21 տարվա աշխատանքային ստաժ:

Ունի հրատարակված 21 գիտական հոդված և 17
գիտաժողովի նյութ: Վերջին 5 տարիների ընթացքում
տպագրել է 8 գիտական հոդված ՄԳՇ-ում, որոնցից 4-ում
հանդես է եկել որպես առաջին և գրագրությունը պահպանող

բ.գ.դ. Հայկ Ազատի
Մինասյան
(հիմնական, 0.25 դրույք)

կ.գ.դ., դոցենտ Հովիկ
Հարությունի Փանոսյան
(ներքին համատեղությամբ,
0.25 դրույք)

կ.գ.թ. Նելլի Սամվելի
Բարսյան
(դրսի համատեղությամբ,
0.25 դրույք)

բ.գ.թ. Անուշ Լևոնի
Բարխուդարյան
(դրսի համատեղությամբ,
0.75 դրույք)

PhD Արիիշեկ Մինիս
(հիմնական, 0.5 դրույք)

հեղինակ: Միջազգային վարկանիշային տվյալներն են. ըստ *Scopus*-ի՝ h-index 7; ըստ *Google Scholar*-ի՝ h-index 9: Ունի 19 տարվա աշխատանքային ստաժ:

Ունի հրատարակված 78 գիտական հոդված, որից 17 ազդեցության գործակցով են: Վերջին 5 տարիների ընթացքում տպագրել է 5 գիտական հոդված *ՄԳՇ*-ում, որոնցից 4-ը միահեղինակ են: Միջազգային վարկանիշային տվյալներն են. ըստ *Scopus*-ի՝ h-index 7: Ունի 45 տարվա աշխատանքային ստաժ:

Ունի հրատարակված 90-ից ավել գիտական հոդվածներ և 100-ից ավել գիտաժողովի նյութ: Վերջին 5 տարիների ընթացքում տպագրել է 12 գիտական հոդված *ՄԳՇ*-ում, որոնցից 4-ում հանդես է եկել որպես առաջին, վերջին և գրագրությունը պահպանող հեղինակ: Միջազգային վարկանիշային տվյալներն են. ըստ *Scopus*-ի՝ h-index 11; ըստ *Google Scholar*-ի՝ h-index 15: Ունի 25 տարվա աշխատանքային ստաժ:

Ունի հրատարակված 33 գիտական հոդված և 33 գիտաժողովի նյութ: Վերջին 5 տարիների ընթացքում տպագրել է 12 գիտական հոդված *ՄԳՇ*-ում, որոնցից 10-ում հանդես է եկել որպես առաջին, վերջին և գրագրությունը պահպանող հեղինակ: Միջազգային վարկանիշային տվյալներն են. ըստ *Scopus*-ի՝ h-index 8; ըստ *Google Scholar*-ի՝ h-index 12: Ունի 18 տարվա աշխատանքային ստաժ:

«Կենսաբանություն» ԳՀԻ-ի գիտաշխատողի թափուր պաշտոնի հավակնորդներ

Ունի հրատարակված 18 գիտական հոդված և 12 գիտաժողովի նյութ: Վերջին 5 տարիների ընթացքում տպագրել է 5 գիտական հոդված *ՄԳՇ*-ում: Միջազգային վարկանիշային տվյալներն են. ըստ *Scopus*-ի՝ h-index 6: Ունի 13 տարվա աշխատանքային ստաժ:

Ունի հրատարակված 36 գիտական հոդված և 11 գիտաժողովի նյութ: Վերջին 5 տարիների ընթացքում տպագրել է 36 գիտական հոդված *ՄԳՇ*-ում: Միջազգային վարկանիշային տվյալներն են. ըստ *Scopus*-ի՝ h-index 9: Ունի 6 տարվա աշխատանքային ստաժ:

կ.գ.թ. Աննա Վլադիմիրի
Գրիգորյան
(ներքին համատեղությամբ,
0.5 դրույք)

կ.գ.թ. Բելլա Գազիկի
Բարսյան
(դրսի համատեղությամբ, 0.5
դրույք)

Ունի հրատարակված 21 գիտական հոդված և 5 գիտաժողովի նյութ: Վերջին 5 տարիների ընթացքում տպագրել է 5 գիտական հոդված ՄԳՇ-ում: Միջազգային վարկանիշային տվյալներն են. ըստ *Scopus*-ի՝ h-index 2; ըստ *Google Scholar*-ի՝ h-index 3: Ունի 22 տարվա աշխատանքային ստաժ:

Ունի հրատարակված 64 գիտական հոդված և 34 գիտաժողովի նյութ: Վերջին 5 տարիների ընթացքում տպագրել է 4 գիտական հոդված ՄԳՇ-ում: Միջազգային վարկանիշային տվյալներն են. ըստ *Scopus*-ի՝ h-index 2: Ունի 13 տարվա աշխատանքային ստաժ:

Ամփոփելով Լիլիթ Գաբրիելյանը փաստեց, որ ըստ կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի մրցութային մշտական հանձնաժողովի կարծիքի ներկայացված հավակնորդների գիտական գործունեությունը, գիտական աստիճանը և աշխատանքային ստաժը լիովին բավարարում են տվյալ պաշտոններին ներկայացվող պահանջներին:

Ելույթներից հետո ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով.

1. Ս.Վ. Մարության (նախագահ)
2. Մ.Ա. Փարսադանյան
3. Հ.Վ. Վարդումյան

Անցկացվեց փակ գաղտնի քվեարկություն, ինչից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ս.Վ. Մարությանը զեկուցեց քվեարկության արդյունքների մասին.

«Կենսաբանություն» ԳՀԻ-ի տնօրենի թափուր պաշտոնի

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Դրույքաչափ	Կողմ	Դեմ
1.	Թոչունյան Կարեն Արմենի	1 դրույք	27	0

«Կենսաբանություն» ԳՀԻ-ի լաբորատորիայի ղեկավարի թափուր պաշտոնի

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Դրույքաչափ	Կողմ	Դեմ
1.	Ավթանդիլյան Նիկոլայ Վլադիմիրի	1 դրույք	27	0
2.	Բադալյան Սուսաննա Միշայի	1 դրույք	27	0
3.	Առաքելյան Մարինե Սեմյոնի	0.5 դրույք	27	0
4.	Կարապետյան Աննա Ֆելիքսի	0.5 դրույք	27	0
5.	Հարությունյան Ռուբեն Միքայելի	0.25 դրույք	27	0

«Կենսաբանություն» ԳՀԻ-ի խմբի ղեկավարի թափուր պաշտոնի

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Դրույքաչափ	Կողմ	Դեմ
1.	Ղազարյան Աստղիկ Սամվելի	0.5 դրույք	27	0

«Կենսաբանություն» ԳՀԻ-ի ավագ գիտաշխատողի թափուր պաշտոնի

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Դրույքաչափ	Կողմ	Դեմ
1.	Սահակյան Նաիրա Ժորայի	1 դրույք	27	0
2.	Մարգարյան Քրիստինե Սերյոժայի	0.5 դրույք	27	0
3.	Մինասյան Հայկ Ազատի	0.25 դրույք	27	0
4.	Փանոսյան Հովիկ Հարությունի	0.25 դրույք	27	0
5.	Բաբայան Նելլի Սամվելի	0.25 դրույք	27	0

«Կենսաբանություն» ԳՀԻ-ի գիտաշխատողի թափուր պաշտոնի

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Դրույքաչափ	Կողմ	Դեմ
1.	Բարխուդարյան Անուշ Լևոնի	0.75 դրույք	27	0
2.	Աբիհշեկ Սինխ	0.5 դրույք	27	0
3.	Գրիգորյան Աննա Վլադիմիրի	0.5 դրույք	27	0
4.	Բաբայան Բելլա Գագիկի	0.5 դրույք	27	0

ՈՐՈՇԵՑԻՆ՝

հաստատել փակ գաղտնի քվեարկության արդյունքները (միաձայն) և «Կենսաբանություն» ԳՀ ինստիտուտի գիտական կազմի թափուր պաշտոնները համալրելու նպատակով ներկայացվող հավակնորդներին համարել ընտրված համապատասխան պաշտոններում:

2. ԼՍԵՑԻՆ՝ ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված «Գիտական արդյունավետության խթանման դրամաշնորհային ծրագիր - 2025» մրցույթին մասնակցելու համար ներկայացված հայտերի երաշխավորության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ կենսաբանության ֆակուլտետի ղեկան, կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը, ով ներկայացրեց 2 նախագիծ: «Կենսաբանություն» ԳՀԻ Սնկերի կենսաբանության և կենսատեխնոլոգիայի լաբորատորիայի կողմից ներկայացված

«Դեղասնկերի ուսումնասիրման արդի խնդիրները և կենսատեխնոլոգիական կիրառման հեռանկարները Հայաստանում» թեմայով նախագիծը, ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆեսոր Սուսաննա Միշայի Բաղայանը:

Նշվեց, որ դեղասնկերը պատկանում են մակրոսկոպիկ սնկերի՝ Basidiomycota և Ascomycota բաժինների Agaricomycetes և Pezizomycetes դասերին: Ներկայացված հայտը ուղղված է Հայաստանի տարածքում նկարագրված դեղասնկերի ուսումնասիրման հիմնարար և կիրառական խնդիրներին: Այն ներառում է դեղասնկերի մոլեկուլային կարգաբանության, էկոլոգիայի, կենսաակտիվ միացությունների, դեղաբանական հատկությունների և կենսատեխնոլոգիական ներուժի բացահայտմանը, միցելիումի կենսաբանական առանձնահատկությունների ուսումնասիրմանը, կուլտիվացիայի պայմանների մշակմանը հետագա կենսատեխնոլոգիական և կենսաբժշկական կիրառման նպատակով: Ծրագրի իրականացման արդյունքում կհամալրվի ԵՊՀ Սնկերի կենսաբանության և կենսատեխնոլոգիայի լաբորատորիայում հիմնադրված սնկային մաքուր կուլտուրաների հավաքածուն, ֆունգարիումը և տվյալների բազան, դեղասնկերի գենետիկական ռեսուրսների գնահատման, պահպանման և հետագա կիրառման նպատակով:

Ներկայացվեց նաև «Կենսաբանություն» ԳՀԻ Ենթաբջջային կառուցվածքների կենսաաֆիզիկայի լաբորատորիայի գիտաշխատող, կ.գ.թ. Լիյա Ալեքսանդրի Մինասբեկյանի «Սնկային էքստրատների և դեղերի հակաուրուցքային ակտիվության սկրինինգ՝ օգտագործելով քաղցկեղային բջիջների կուլտուրաների 3d հեղուկ սֆերոիդ մոդելը» նախագիծը:

Նշվեց, որ նախագծի շրջանակում կուսումնասիրվեն *Pleurotus ostreatus* սնկի միցելիալ էքստրակտները՝ նախապես մշակված տարբեր հաճախության մմ-ալիքներով, 3D սֆերոիդ ուռուցքային բջիջների կուլտուրայի թեստ մեթոդով, որը վերջերս մշակված նոր մոտեցում է և այժմ լայնորեն օգտագործվում է հակաուրուցքային դեղերի սքրինինգի նպատակով: Նշվեց, որ ծրագրի շրջանակում նախատեսվում է իրականացնել հետազոտություններ և in vitro՝ 3D գնդաձև մոդելի, և in vivo՝ առնետների քաղցկեղային հյուսվածքների վրա: Ծրագրի իրականացման արդյունքում ստացված տվյալները կնպաստեն նոր բարձր ակտիվություն ունեցող հակաքաղցկեղային դեղամիջոցի ստեղծմանը՝ հետագա կիրառման նպատակով: Ներկայացված նախագծում որպես օտարերկրյա գործընկեր հանդես կգա Մոնրեալի համալսարանի պրոֆ. Լ. Աբրահամյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել վերոհիշյալ նախագծերը մրցույթին մասնակցելու համար:

